

ԲԱՏԱՆՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Տր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Անկերիկայի համար
Տարեկան 3 սրլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ
Ծանուցանել տողը առաջին
դրոշմի համար 40 սակիով
և իսկ վերջին երեսի հա-
մար 20 սակով և և երեսին
անյի ակզաններու համար
20 Օլգ զեղը կըլլայ :

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նորագույն
Խմբագրութեան հասցեի
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)
Իրոքիւնի և չին տուր
Արտասահմանի ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

ՀԻՍՏՈՒՄԱՅԻՆ ՀՍԿԱՆ

Ուսուցողութեան հիւսիսա-
յին հսկան ակտի է շարժվել, իր
աչքերը պատու սեւ քողը պատ-
ուել և բարձրել իր վրայ ծանրա-
ցող միապետական բռնութեան
ահաբեի ծանրութիւնը : Մինչև
օրս այդ սոսկալի բռնութեան
գէտ բողոքում էր միայն ուս-
նողութիւնը և կամ զարգացած
դասակարգի մի շնչին մասը,
իսկ այս քանի օրվայ խռովու-
թիւններին մասնակցել է և գոր-
ծաւոր դասակարգի մի մասը :

Մի քանի օրվայ մէջ յարձա-
կուններ տեղի ունեցան Մոսկվա-
յի փոխարքայի պալատի վրա .
ուսուցիչ ուսանող սպանեց լուսա-
ւորութեան նախարարին, մի
գաւառական պաշտօնեայ չորս
գնդակ արձակեց ուսուցիչի ճի-
ւղի, բռնութեան ամենազօրեղ
նեցուկ, խաւարամիտ Պօքեզօ-
նոսցեպի վրա, բայց չը յաջողեց
սպանել նրան :

Ի հարկէ անթիւ ձերբակալու-
թիւններ եղան : Ուսուստանի բան
տերն էլ իր հարեւան բռնակալի
երկրի բանտերի պէս լցվել են
ժողովրդի ծաղիկ տարրով, երի-
տասարդութիւնով . կիներ էլ
կան զրանց մէջ, փափուկ օրի-
որդներ որոնց հետ կապակները
վարվել են ամենավայրենի կոպ-
տութեամբ :

Այդ կապակներ, ոստիկանու-
թեան և իշխանութիւնների կոպ-
տութիւնը այնքան չափազանց է
եղել, որ շատ պրօֆեսորներ և
գրագէտներ, ամեն բան մոռնա-
լով յանդգնել են բողոքել այդ
հրէշային բռնութիւնների գէտ :

Այս վերջին խռովութիւնների
միջոցին կուսեց թէ ուսանողը,
թէ հասարակ ժողովուրդը, թէ
գիտնականը, թէ գրագէտը և
թէ կինը . ամէս մէկը իր ուժերի
չափով . . .

Այս շարժումէ հիւսիսի քնած
հսկան . ուսուցիչ 120 միլիոն ժողո-
վորդի մի մասը, և գուցէ հե-
ռու չէ այն օրը, երբ ամբողջովին
կը շարժվի : Թող շարժվի, ուրիշ
օգնող չըկայ, իր վիճակը թե-
թեւացնելու, բարւոքելու համար

օտար և աւելի զօրեղ միջամտող
չըկայ :

Մենք հիանում ենք ուսուցիչ-
ուղ տարրի տոկոսութեան և
քաջութեան վրա : Հիանում ենք,
որովհետեւ գիտենք թէ ուսուցա-
րերը իրենց հշխանութիւնը ան-
խախտ պահելու համար որքան
կատաղի ու անխնայ կարող են
լինել . . .

Հիանում ենք, որովհետեւ գի-
տենք թէ ուսուցիչ տարրը ինչ
ազնիւ ու թանկագին զոհեր է
տուել իր մարդկային իրաւունք-
ները վերականգնելու համար .
տուել է, աւելի է և պէտք է շա-
րունակէ տալ այդ անմեղ ու ան-
զին զոհերը . . .

Հիանալով հանդերձ, մենք
ցանկանում ենք ուսուցիչ-
տարրին որ օր առաջ իր ազատա-
կան զգալիքներով խմորէ ուսու-
ցողութեան զանգուշակումը, որպէս
զի որքան կարելի է շուտով տա-
պալվի բռնութեան ծանր լուծը և
ուսուցիչ 120 միլիոն ժողովուրդը
կարողանայ ազատ շունչ քաշել
ու մեծ թռչելով սլանալ գէպի
լայն քաղաքակրթութեան նպա-
տակակէտը :

ՎԱՐԴՈ

ՐԵՍՊԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՐԻՔԻԱՆ (DIE SOZIAL-ÖKONOMISCHE TURKEI)

(Շար. Ասխուր Բիւրեհ)

Ե. Գլուխը որ «Տուրքերը» իտրա-
գիրը կը կրէ : Կը թուէ ուղղակի
տուրքերը (անուղղակի տուրքերուն
զխաւորները հանրային պարաքե-
րուն վարչութեան սնուկը կը հո-
սին) և անոնց հաւաքման բազմա-
սեսակ ու ծանր զեղծումները, ո-
րոնց ներքեւ կը ճնշուի ժողովուր-
դը, մանաւանդ քրիստոնեաները,
Բոնի առնուած դրամի գումարին և
այն տուրքերուն քանակին միջեւ,
զորս ժողովուրդը օրէնքի համաձայն
պարտի կառավարութեան վճարել,
ահագին տարբերութիւն կայ . այս
տարբերութիւնը այլազան ապօրէն
միջոցներով կը գանձուի և կը մըտ-
նէ մեծ ու պղտիկ բոլոր պաշտօնեա-
նորուն գրպանը : Այս բաւական չէ .
հայերը ստիպուած են նաեւ քիւրա
պէտրու և չէլիքերու մասնաւոր
հարկեր վճարել : Օրինակ, ձէլիբէյի

գայմագամութեան Մէնսուրա գիւղը
1893ին կառավարական մարդոց 9000
զրոյ : իսկ քիւրա Մոտաֆա փաշային
4000 զրուչ, ուրիմն ընդամէնը 13.000
զրուչ վճարած է իբրեւ ապօրէն
տուրք, մինչդեռ նոյն գիւղին միւ-
նոյն տարին վճարած օրինական
տուրքերուն գումարը եղած է 14.000
զրուչ : Ասոնք խաղաղութեան ժա-
մանակ վճարուած տուրքեր են, ո-
րոնցմէ զատ գիւղացին պատերազմի
միջոցին ալ, պէտք է պահէ իր գիւ-
ղէն անցնող զինուորները, տոկալ
անոնց յափշտակութիւններուն և
վերջապէս կրէ, երբեմն ալ, աւա-
զակներու յարձակումները :

Չ. Գլուխը կը խօսի «Ճարտար-
ուեստին» վրայ որ արգահատելիօրէն
յետամնաց վիճակի մէջ է : Ճարտար-
ուեստի արտադրութիւնները ամե-
նամեծ մասամբ տանը մէջ ձեռքի
աշխատութեամբ պատրաստուած
խեղճ բանք են : Գործարանները,
բոնին երոպական իմաստով, շատ
աննշան թիւ մը կը կազմեն և ա-
մէնքն ալ կառավարութեան և օտար
տէրութեանց հպատակներու կը վե-
րաբերին : Կառավարութիւնը երկու
գործարան հիմնած է, մէկը ասուիի և
միւսը ասուիի և ֆէսի . սակայն այս
երկու ապրանքներէն ալ մեծ քա-
նակով կը ներածուի արտասահմա-
նէն Գորգի գործարանները հետզ-
հետէ ընդարձակուելու վրայ են,
զխաւորապէս Իգմիրի և Հայէպի մէջ,
ուր 3000ի մօտ գործաւորներինը
կաշխատին . մետաղագործութիւնը
համեմատաբար բաւական յառաջա-
ցած է . կան երկաթի և հում եր-
կաթի գործարաններ . կառավարու-
թիւնը ունի ինչպէս թիւ ձուլարան-
ներ, և հրացանի գործարան մը :
Տիրապիւրի մէջ կան կաշիի հինգ
մեծ գործարաններ՝ երեքը հայերու
սեփական :

Թուրքիոյ արհեստաւորներուն մե-
ծամասնութիւնը հայ է . Ամասիա քա-
ղաքին 115 արհեստագործի և 300
մանիֆաթուրայի խանութներէն 375ը
հայերու կը վերաբերին, որոնք ընդ-
հանրապէս օժտուած են ճարտարու-
թեամբ, ձեռներէցութեամբ և աշ-
խատասիրութեամբ :

Ճարտարութեան ընդհանրապէս
մէջ նշանակութեան արժանի է շե-
րամարտութիւնը : 1866—1871 տա-
րիներուն մէջ Պրուսա քաղաքը և
նահանգը 54 միլիոն ֆրանքի մե-
տաքս արտածած են :

Անասնաբուժութեան դալով . ոչ-
խարը գլխաւոր տեղը կը բռնէ : Նշա-
նաւոր են Անատոլուի դժակաւոր ոչ-
խարները, 1894ին Էնկիւրիի վիլա-
յէթին մէջ կային մէկուկէս միլիոնէ
աւելի ոչխար . իւրաքանչիւր ոչ-

խար միջին հաշուով կուտայ 1300 կր-
բուրդ . գրեթէ նոյնչափով բուրդ
կուտան նաեւ այծերը :

Ճարտարութեան զարգացումին ար-
գելք կըլլան միւսնոյն ողբալի պայ-
մանները, որոնք երկրագործութեան
յետամնացութեան պատճառ հղած են :
Ճարտարութեան ներքին, հանքերուն
պէս, կը պատեն օտարներու դրա-
մազխիւն և մասնագիտական կար-
ողութեան, որոնցմով միայն թուր-
քիա պիտի կրնայ մօտ ապագայի մէջ
այն բարձր դիրքը բռնել, որ իրեն
յատկացուած է դուրսէն :

Է. Գլուխին խորագիրն է «Հաղոր-
դակցութեան ճամբաները» : Հինգ
ժողովուրդ մօտ ահագին տարածութեան
մը վրայ թուրքիա միայն 600 մղոն
չինուած ճամբայ ունի : Այս ողբալի
պարագային վիսաակար հետեւանք-
ները յայտնի են : Եթէ զիւրանցա-
նելի ճամբաներ գտնուէին և, օրի-
նակ, Սամսոնի նաւահանգիստին
մէջ քանի մը հարկաւոր շինութիւն-
ներու ձեռնարկուէր, այս քաղաքը
ցորենի արտածութեան մէջ պիտի
կրնար Օտէսայի հետ մրցիլ : Թուրք
պետութիւնը եւրոպական թուր-
քիոյ մէջ 1300 քիլոմէթր երկաթուղի
միայն ունի . մնացած երկաթուղի
ցանցը օտար ընկերութեանց կը վե-
րաբերի : Ասիական թուրքիոյ հինգ
երկաթուղիի գիծերէն, որոնք 3277
քիլոմէթր երկայնութիւն ունին,
չորսը կը վերաբերի Գերմանական,
Ֆրանսական, անգլիական և Աւ-
ստրիական ընկերութիւններու և
միայն Մուստանիա-Պրուսայի գիծը,
այն ալ 41 1/2 քիլոմէթր երկայնու-
թեամբ . կը վերաբերի պետութեան .
Անատոլուի երկաթուղիներուն հա-
մար ծախսուած օտար դրամաւորները
կը հասնի 580 միլիոն ֆրանքի, որ
գրեթէ 5 Օ/Օ շահ կը բերէ : Երկա-
թուղիներուն շնորհիւ երկաթուղի-
ութիւնը և առեւտրական յարաբերու-
թիւնները հետզհետէ ընդարձակուե-
լու վրայ են թէ՛ արտասահմանի հետ
և թէ՛ երկրին զանազան կէտերու-
միջեւ : Ինչպէս կապացուցանէ վի-
ճակագրութիւնը : Ոճուղիներու և
երկաթուղիներու պակասութեան
պատճառաւ ամբողջ գաւառներու ա-
մէն տեսակ արտադրութիւնները կը
փճանան : սպառում չի գտնելով .
Պաղատալի երկաթուղիին ցանցը, ո-
րու շինութեան արտօնութիւնը տըր-
ուած է գերմանացիներու, ուսերու
և ֆրանսացիներու, մեծ նշանա-
կութիւն պիտի ունենայ թուրքիոյ
համար՝ տնտեսական տեսակէտով :

(Շարունակելի)

—)(—

ՅՈՒՆԱՅ ՊԱՏՌԻԱՐԲԸ

Մարտիկա հրատարակող «ԱՒ-մաֆոր»-ը Մարտի 11-ի թերթի մէջ գրուած է .

«Յունաց պատրիարքը Մակեդոնիոյ մէջ գտնուող բոլոր յոյն առաջնորդները շրջաբերականով մը հրաւիրած է իրենց ձեռքէն եկած բոլոր միջոցները գործ դնելով մանրամասն տեղեկութիւններ հաւաքել մակեդոնական քօմիթէներու կազմութեանը մասին և հաղորդեն Թիֆլիսի պատրիարքարանը կամ թէ ուղղակի թուրք իշխանութիւններուն» :

Ահա ձեզ ազտոս , վատ գործ մը , որ կընէ Քրիստոնեայ ազգի մը Քրիստոսի փոխանորդ համարուած հոգեւոր պետը :

Յայտնի է որ Պոլկարներու ամենամեծ թշնամին , Մակեդոնիոյ մէջ , թուրքերէն յետոյ , յոյներն են : Յոյները թուրք իշխանութեան ամենալաւ գործիքն են Մակեդոնիոյ պոլկար տարրին ամէն քայլերուն հետեւելու համար : Յոյն լրտեսները լեղէն մը կազմեն , և օձերու նման սողալով պոլկար տարրի մէջ շարունակ կը խայթեն . իրենց խայթելը չի բաւեր , թուրքերու գազանային տրամագրութիւնները կը գրգռեն . բայց այդ շօվէն , աղտոտ գռեհիկ ու ազնուութեան վրայ մազի չափ գապափար շունեցոյ տարրն է որ այդ ստորնութիւնները կընէ . իսկ ինչ ըսենք յոյն պատրիարքին համար . . . Կրօնաւորի մը լրբութիւնը այդ աստիճանին միթէ կրնա՞յ հասնի :

Արդեօք իրենք յոյները չե՞ն ամչնար իրենց պատրիարքին ըրած այդ ստոր քայլէն . արդեօք երբեմնի ասպետական ազգին մէջ մաս մը , կամ մարդ մը չըկա՞յ որ այդ իր հաւատակիցները և հայրենակիցները թուր-

քին մատնու պատրիարքին արժանաւոր պատիժը տայ :

Կրան թէ պոլկարները Մակեդոնիոյ մէջ գտնուած յոյները կը հալածեն , բայց ի՞նչպէս չը հալածեն , երբ ասոնցմէ շատերը թրքական լրտեսներ են : Մի՞թէ մեղաւոր պիտի ըլլան պոլկարները , եթէ լրտես յոյն հոգեւորականութիւնը շնչեն աշխարհի երեսէն . ի հարկէ ոչ :

ԹՈՒՍԹՈՅԻ ԿԻՆԸ

Կոմսուհի Թոլսթոյի րամուսինը ուղղափառ եկեղեցիէն արտաքսուած ըլլալուն համար հետեւեալ նամակը գրած է Սինոդի պրովոքոր Պօպէտօսուցէվին .

Մոսկուա , 26 Փետր . 1901

«Թերթերու մէջ կարդացինք Սինոդի որոշումը , որով ամուսինս Աւել Նիկոլայէվիչ Թոլսթոյ , եկեղեցիէն կը հրաժարեցուի : Այդ որոշումը , հաստատուած եկեղեցիի հովիւներու ստորագրութիւնով , չէր կրնար զիս անտարբեր ձգել :

Իմ բարկութիւնս և վիշտս մեծ են : Ոչ անոր համար որ այդ վկայազիրը իմ ամուսնոյս հոգեկան մահը կը նշանակէ , որովհետեւ այդ Աստուծոյ կախեալ է , բայց ոչ մարդոցմէ : Կրօնական տեսակէտով հոգիի գոյութիւնը ամենուս համար անթափանցելի գաղտնիք մըն է և այդ կեանքը , փառք Աստուծոյ անհատական իշխանութենէ չէ կախուած :

Բայց , երբ կը տեսնամ թէ այդ որոշումը արձակուած է , այն եկեղեցիէն որուն կը պատկանիմ և երբեք չեմ դադարի պատկանելի , և զոր Փրկիչը հիմներ է Աստուծոյ անունով մարդկային

ամենահանդիսաւոր գործերը սրբազործելու համար , ծնունդ , ամուսնութիւն և մահ , որուն պաշտօնն է գթութեան , ներողամտութեան օրէնքը հաշակել գէպի մեր ատելիները և թշնամիները անգամ , և որուն ամէնքս կաղօթենք՝ խելքս բան չի կտոր : Այդ նշովումը ոչ թէ պիտի քաջալերուի , այլ ընդհակառակը պէտք է պղտեցնէ ամբողջ մարդկութիւնը և ամուսնոյ վայելած սէրն ու համակրանքը անելի պիտի զօրեղանայ : Արդէն սխաժ ենք ստանալ այդ համակրանաց արտայայտութիւնները և դեռ աշխարհի ամէն ծայրերէն պիտի ստանանք :

Կը յիշեմ և այն անմիտ միջոցը , որ այդքան շուտով ձեռք առնուած է և ինձ մեծ վիշտ կը պատճառէ . Սինոդը գաղտնի շքրջաբերականով մը բոլոր քահանաներու պատուիրած է ամուսինս , մահուանէն ետքը չի թաղել , Իսկուպէս զո՞վ կուզեն հարուածել ! մեռած , անշունչ դիակը , թէ անոր հաւատացեալ շրջապատողները . եթէ այդ սպառնալիք մըն է , ո՞րու է ուղղուած և ի՞նչ նպատակով :

Արդեօք կը մտածեն թէ չի պիտի կրնամ զտնալ բարի , մարդոցմէ չի վախցող և Աստուծոյ սիրող քահանայ մը որ ամուսնոյս թաղման հանդէսը կատարէ , կամ թէ վատ անբարեք մը որ ստակի սիրոյն համար ինքզինքը իմ տրամադրութեան տակը դնէ :

Սակայն ատոր ալ պէտք չի զգայուի , եկեղեցին ինձի համար վերացական բան մըն է , և անոր մէջ ուրիշ պաշտօնեայ մը չեմ ճանչնար , բացի անոնցմէ որոնք իսկուպէս կը մըռնեն եկեղեցիին նշանակութիւնը :

Եթէ ընդունէինք որ եկեղեցին միայն մարդկանց մոլորատեղի մըն է , որոնք իրենց զօ-

րութեանը մէջ առանց վարանելու օտնակոխ կընեն Քրիստոսի պատուէրը , վաղուց ամէնքս ալ պիտի թողուինք զայն և ոչ թէ անոր հաւատարիմ կը մնայինք և անոր օրէնքները կը պահպանէինք :

Ո՛հ , երբէք ուրացող չեն ըլլար անոնք , որոնք ինքզինքնին կը ոչնչացնեն ճշմարտութիւնը փնտռելով , այլ եկեղեցիի այն գլուխները որ հաւատարիմ չեն սիրոյ , հեղութեան ու գթութեան օրէնքներուն և իրենց գոռոզութենէն մղուած հոգիի դահիճներու դերը կը կատարեն :

Աստուած ներողամիտ պիտի ըլլայ զէպիանոսն , որոնք նոյնիսկ եկեղեցիէն դուրս ըլլալով հանդերձ , հեզ , աշխարհի փառքերը արհամարող մարդասէր եղած են և հաւատարմութեամբ անցուցեր են իրենց կեանքը : Այս անակները անելի շուտ պիտի արժանանան Անոր ներողութեան քան թէ այն թանկագին ակունքներով զարդարուած վեղարաւորը և սքեմաւորները որոնք իբր վատ հոգիներ կանդամատեն իրենց ծառայած եկեղեցին :

Թող կեղծաւորները ուղածնուն չափ շարձարուին իմ խօսքերու նշանակութիւնը կերպարանափոխեն : Անկեղծութիւնը կօզնէ մեզ ճանչնալու մարդուն իսկական նպատակները :

Կոմսուհի Սօփիա Թոլսթոյ

ՌՈՒՍԻԱ . ԱՆԳԼԻԱ ԵՒ ԹՐԱՆՍԿԱՆԻԱ

Թիֆլիցի մէջ կտոր մը հովի համար . քիչ մնաց որ աշխարհի երկու վիթխարի պետութիւնները իրարու հետ մենամարտի սկսին : Պահ մը ամբողջ աշխարհը սահմակեցաւ , որովհետեւ Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ տեղի ունեցող պատերազմ մը կրնայ ամբողջ

էորութիւնը կը թողուն ընթերցողի վրայ , զայնս հրապարակելու տխուրութիւնը ունեցող մարդուն հանդէպ :

Անտիխի , Արփիարի այդ ամենէն մոլեռանդ ու հաւատացեալ պաշտպանին վերջին յայտարարութիւններէն ի վեր - որոնց վրայ թերեւս քիչ ատենէն անգրադատանամ - ալ ամէն մարդ հասկցած է թէ ի՞նչ կարժէ այդ պատերազմը : Վեցամսեայ պապանձում մը ետքը , լոկ Անտիխի մերկացուները չեղողացնելու համար մարտ սկիզբը հրատարակուած այդ թերթի նախ մէկէ աւելի պապոյցներով կողմէն հաստատել թէ , Արփիար վերջին ճիգով մը փորձած է օսկանի հանգամանք տալ թերթի մը որ լոկ իր օգրական մէկ բարեկամին» յայտնութեանց վիժումն է իր կուսակցական դատապարտելի պարագրութեամբ : զոր ապարտելի ըսի , քանզի փախուտ որ կուտայ պատուոյ ատեանի մերժումի մասին Դաշնակցութեան պատ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՒԱՏՔԻՆ ԶԱՎԱԳՈՐԾՈՒՄԸ

Հազար անգամ կրկնուած խնդիր մը ըլլալ պիտի կարծեն թերեւս այս վերնագիրը կարդացողները : Իրաւցրնէ , մամուլի ազատութեան հռչակումէն ի վեր խիզախ ու անկասկանոր մարդիկ ճակատաբաց կուր մղած են ամբողին հաւատքը շահագործող մարդոսներու դէմ : Հոս՝ գիմակը վար առած են սեւ սքեմին տակ սրբաբացած՝ քոտենորդի ճիգուիթի մը , որ ժողովուրդէն անհատուած սանգիմներ կը կորդէ ապագայ երանութեան սնտախ խոտուումներով , կամ անեղ սանջանքին ողորմելի սպառնալիքով . հոն՝ ջախջախած քանդած են իբր թէ ժողովրդին բարորու-

թիւնը ապահովելու կոչուած կառավարութիւնները , որոնք յանուն Աստուծոյ ու կրօնքի միամիտ հաւատացեալները մղած են ամենէն անարգ ու ամենէն եպիտելի ոճրագործութիւններուն , եւ որոնք աշխարհի է՛ն սրբազան զգացումներուն անունով՝ մարդիկը իրարու դէմ զինած , անոնց ամենէն անասնական կիրքերը սրած են , ու գազանային նախճիրներու եւ արիւնի սարսուցուցիչ լճացուցիներուն ի տես սկսած են ծիծաղել հրճուագին այդ ոչխարամիտ ամբողին վրայ , Հաւատքի շահագործումն էր որ ծնաւ անելի հաւատաքնութիւնը և այն Սրբազան պատերազմները որոնց թիւը լեզուները կը կազմէ պատմութեան մէջ :

Այս ամէնը եղած է ու կըլլայ և այս ամէնուն համար ըմբոստ մտքեր գրած են միշտ :

Յեղափոխութիւնները ծնած ու աճած են նոյնիսկ ժողովուրդներու ծոցին մէջ , այդ մակարոյծ շահագործողները չեղողացնելու համար : Զուտ

ամբոխային այդ շարժումներն են որ կղերին մեքենայութիւններն ու բոնակալութիւնները խորտակած և Աստուծոյ կամքով՝ բնորուած թագաւորներուն անհանգուրժելի կամայականութիւնները պատճած են : Յեղափոխութիւնը բուն իսկ ժողովրդին ձեռքով կառավարութիւններու վրայ գրուած արժանաւոր պատիժն է : Անիկա ազգին ճշմարիտ ձայնն է :

Բայց , ինչպէս ամէն բան , յեղ֊փոխութիւնն ալ այլասերողներ գրանուեցան մեր մէջ , Միամիտ հաւատարին շահագործումը ալ գիլող յեղափոխութիւնը , այսօր ումանց բերնին մէջ , սոքա ամբողին մոլեռանդութիւնը զարթուցանող ու շոյող նոր ճիգութիւններն մը գարձած է , ու դժուար չէ հանդիպիլ նոյնիսկ յեղափոխական ըլլալու կոչուած պաշտօնաթիւրթի մը մէջ (Արփիարիանի օրկանը) այն տեսակ մոլեռանդ հրատարակութիւններ , որոնք ամենէն զղուելի ու ամենէն ողորմուկ սպա-

մարդկութեան ճակատագրին վրայ զօրեղապէս ազդել և ամէն բան յեղաշրջել, աշխարհագրական քարտէզը փոխելով և ազդերու պատմութեան անիւր ուրիշ կողմ մը դարձնելով: Այդ երկու հսկայ պետութիւնները վաղուց է որ միմեանց դէմ ահապաղ կը կճուտեն, սակայն երկուքն ալ կը վախճան յարձակում գործելու, որովհետեւ ատենցմէ ով որ պարտուի, պիտի կորսնցնէ իր առաջնակարգ նշանակութիւնը: Ընդհարումը հասկցող և իրարմէ կասկածող երկու փէհլիվաններու կը նմանին, որոնք իրարու հաշակին կը նախանձին, կուզեն զիրար վարկաբեկել, բայց չեն համարձակիր գօտեմարտիլ, որովհետեւ ոչ մէկը ապահով է թէ պիտի յաղթող հանդիսանայ:

Աշխարհը սրտագող կը սպասէր այդ վիթխարի փէհլիվաններու գօտեմարտին. բայց նորէն փէհլիվանները իրարմէ վախնալով, համաշխարհային սրտագող հանդիսականներու ակնկալութիւնները շուրջ նետելով՝ իրարու վրայ ունալով և մրթմրթալով ետ քաշուեցան:

Ու շատ լաւ ըրին... մարդկութիւնը ազատեցաւ հրէշային և հսկայական արիւնոտ տեսարանէ, արցունքէ կազմուած սփիւնոսէ և մարդկային դիակներէ բարգուռած բլուրներէ...

Արգեօ՞ք այդ վտանգի առաջքը առնողը Ռուսական ներքին խառնակութիւնները և թրանսվալիպատեքազը չէին: Քաղաքագէտ ըլլալու յաւակնոտութիւնը շուննալով հանգերձ, կարելի է ենթադրել որ Ռուսիոյ մէջ տեղի ունեցած ներքին խռովութիւնները, ֆինլանտացիներու վերջին դժգոհութիւնները, Պալքանի հրաբորբք վիճակը, քիչ մը Ռուսիան սանձահարեցին. իսկ

Անգլիա ալ ընկճուեցաւ թրանսվալի վտանգաւոր վիճակէն: Փոքրէ Ռուսիայէն սպասուելիք վտանգն էր որ Անգլիոյ ստիպեց հաշտութեան ձեռք կարկառել թրանսվալի. ու, երբ վտանգը անցաւ նորէն գործին այնպիսի ձեւ մը տուաւ որ հայտարարութիւնը տեղի չունեցաւ:

Կը կրկնեմ ասոնք ոչ քաղաքագէտի, այլ հասարակ մահկանացուի մը ենթադրութիւններ են, որոնք կրնան ճշմարիտ ըլլալ:

Անգլիա ուզեց թրանսվալի հետ հաշտութիւն կայացնել և նախինք ձեռք կարկառեց. պայմաններու մասին խօսիլ չեմ ուզեր. ինձի կը բաւէ և այն որ գոռոզ Անգլիան եղաւ հաշտութիւն առաջարկողը: Արգեօ՞ք Անգլիա յոգնեցաւ Պօէրի հետ կռուելէ. արգեօ՞ք ուժերը սպառեցան, թէ Ռուսիոյ հետ ընդհարում ունենալու կասկածէն փափաքեցաւ թրանսվալի հարցը կերպով մը լնցնել և ամփոփուած ուժերով Ռուսիոյ դէմ ելլալ: Անգլիոյ կառավարութեան մարդասիրական զգացմունքէ դրդուած ըլլալու մասին չեմ խօսիր, որովհետեւ շատ կը կասկածիմ թէ Չէմպրլէն մը կրնայ մարդասէր ըլլալ:

Այսպէս թէ այնպէս, հիմակ իրողութիւնը, չոր ու դրական իրողութիւնը այն է որ Պօէրները հաշտութեան պայմանները չընդունեցին. ուրեմն այդ պայմանները շատ անտանելի էին, որ հիւժուած, արիւնքամեղած ժողովուրդին զօրավարները պատերազմը ատանկ հաշտութենէ մը գերադասեցին:

Այդ հերոսական, թէեւ անգործնական վարմունքին դէմ, անգլիական մամուլին մէկ մասը կը կատաղեր է և կորոտայ՝ այլեւս

պէտք է Պօէրները բոլորովին ջնջել:

Արգեօն շնչուեցան ինքզինքը. ալ ինչերնին մնաց: Չէ, պէտք է բոլորովին ջնջել:

Երբ Ռուսիոյ հետ ընդհարման վտանգը մէջտեղ կար, անգլիական մամուլը լրջարար կըսէր. ամէն զոհողութիւն պէտք է ընել մեր զինքը և պատիւը պաշտպանելու համար Ռուսիոյ դէմ, ռուս ժողովուրդը ջնջելու խօսքը արտասանելու քաջութիւնը չը կար. իսկ երբ Պօէրներու հետ է գործերնին, կըսեն՝ պէտք է ջնջել...

ՄԱԿԵՂՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՍՈՒԼԸ

Ամբողջ օտար մամուլը կը հաստատէ թէ Մակեդոնիոյ վիճակը շատ գէշ է: Բանտարկութիւնները, խուզարկութիւնները և սպաննութիւնները բազմաթիւ են. մանաւանդ եւրոպական դեսպաններու Սուլթանին խիստ միջոցներ ձեռք առնել թելադրելէ յետոյ:

Ոմանք կը կարծեն թէ պուլկարները յուզողը անգլիացիներն են, որ կուզեն ռուսները և աւստրիացիները Պալքանի խնդիրներով զբաղեցնել, ոմանք ալ աւստրիացիներու վրայ կը կասկածին:

Օտեսայէն Անգլիական «Սթանտարտ» թերթին կը գրեն. Ռուսիա Պալքանեան թերակղզու գործերը շատ վտանգաւոր կը գտնայ. ատոր իբր փաստ կրնայ ծառայել այն որ զինուորական մեծ պատրաստութիւններ կը տեսնայ, հարկ եղած ժամանակին իսկոյն Պրուսիա գետը անցնելու համար: Երեք տարի առաջ Ռուսիոյ և Աւստրիոյ միջեւ պալքաններու վրայ խաղաղութիւնը

պահպանելու համար կայացած դաշնագրութիւնը նշանակութիւն չի պիտի ունենայ ներկայ ահաւոր պայմաններուն մէջ, և այդ երկու պետութիւններէն ամէն մէկուն ալ յարմար առիթ կուտայ միջամտելու, եթէ մակեդոնական կոմիթէն յաջողի փոթորիկ մը հանել: Պէտք չէ մոռնալ որ պալքաններու մէջ խաղաղութեան այդ երկու պահպաններէն ամէն մին, առանձնապէս և իր սեփական շահուն համար պիտի միջամտէ: Վտանգը անոր մէջն է որ Ռուսիա Աւստրիոյ նախանձելով, կրնայ աւելի շուտ միջամտել, որովհետեւ բոլորովին տրամադիր չէ արեւմտեան ունէ երկրի մը թոյլ տալ առաջնութիւն ունենալու Պուլկարիոյ մէջ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

«Եւրոպայի հայ ուսանողական միութեան» տարեկան համագումարը կը բացուի Միւնխէն, ապրիլի 1ին և կը տեւի մէկ շաբաթ: Այս առիթով կարգադիր Յանձնաժողովը խնդրում է այն ուսանողներէն և ուսանողական խումբերին որոնք մինչեւ այժմ բանակցութեան մէջ չեն մտել իր հետ, բարեհաճեն հաղորդել իրանց հասցէները, ինչպէս և այն առաջարկները, որ կուզենային անել համագումարին: Այս դիմումը անում ենք յատկապէս Յորանայի և Անգլիայի ուսանողներին, որոնք դեռ մօտից յարաբերութեան մէջ չեն մտել միութեան հետ:

«Միութեան» պէտք է դիմել այս հասցէով՝

Union des Etudiants Arméniens de L'Europe
Genève (Suisse)

—)(—

տասխանելէ, հակառակ վեցամսեայ ժամանակամիջոցի մը. Արփիարի մեքենայութիւններէն մէկն է կուսակցութեան թերթէն բացակայութիւնը սրողելու համար սարքուած:

Բայց դառնանք մեր յօդուածի նիւթին:

Պաշտօնաթերթը միւսուրոյն համարով միութեան հարցի մասին խօսուելով, կը յայտարարէ թէ այդ գործը անկարելի է, որովհետեւ Դաշնակցականներու հետ միանալու համար, նախ պէտք է եղեր Ստամբուլի դէմ պատերազմ մղել, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ Գրիստոնէական կրօնքը, Լուսաւորչէն մինչեւ Իզմիրլեան բոլոր սրբապնագոյն հայրապետները ուրանալ, ծաղրել հայ ժողովրդին պաշտած Աստուածը (մեղայ, մեղայ, երիցս մեղայ!!!), և այլն և այլն:

Սարսճեանի և սիրահոջակի վեհուհիին մը հետ զինակցութիւն կազմող Արփիար մը միայն այսքան ապուշ և միամիտ կրնար ձեւանալ,

ու մենք համոզուած ենք որ կուսակցութիւնը պաշտօնաթերթին խմբագրութեան մէջ եթէ ձայն ունեցած ըլլար, այդ ողորմելիութիւնները փոխելու երբեք թոյլ չի պիտի տար իրեն:

Միութեան դէմ այս եզակի պատճառաբանութիւնը ինքնին այնքան վարնոց ու փուճ է որ, հակառակ փաստել անխելքութիւն պիտի ըլլար: Միայն մասնախիշ կուզէի ընել այդ տարօրինակօրէն ինկած մարդուն երբեմնի մաքառու՝ երբ նոյն Հայաստանեայց Ս. կրօնին և սրբազնագոյն! հայրապետներուն դէմ:

Բացէ՛ք Պոլսոյ Հայրենիքին ունէ մէկ թիւը, որով այդ ինկած խմբագիրը միշտ կը պարծի իր յօդուածներուն մէջ: Անվերապահ արհամարհանք կոյր հաւատքին դէմ, ինչ կուզէ թող ըլլայ ան, երբեմն ծայրայեղ անխղճութեան հստակ կատարի հարուած ու հալածանք կը կրականներու ու հայրապետներու դէմ. անհինչ որ պիտի գտնէք անոր իւրաքանչիւր սիւնակներուն մէջ, նոյն մարդը այսօր հակառակը քարոզել կը փորձէ ժողովրդին, այն ճիղուրթական ճարպիկութեամբ որով Արփիար կրնայ, նոյնիսկ ամենէն մօտիկ «գրական բարեկամներուն» վկայութեամբ, վարկեան մը առաջ դրածը պատուել ու անոր տեղ նորը գրել ճիշդ հակառակ իմաստով, եթէ հանգամանքները պահանջեն:

Արփիար իրով մերկացած դատարկութիւնը փարատելու համար ուրիշ միջոց չէ գտած, բայց եթէ ամբողջին հաստքը շահագործել, եւ ակային ինչպէս գրողը ամենէն աւելի լաւ համոզուած է, շատերուն բերնին մէջ լեփ լեցուն պոթիկացող այդ հաւատքը արդէն ոչ մէկուն սիրտը կըրնայ յուզել այսօր, և ոչ իսկ իր պաշտօնեաներուն սիրտը: Միութեան գժուարութիւնները պարզող շատ աւելի լուրջ պատճառներ կան, որոնց մասին երկարօրէն գրուած է ժամանակին եւ որոյ մէջ «Աստուծոյ զոյուութեան խնդրը» երբեք գեր չէ խաղացած:

Յեղափոխութիւնը զօրաւորին դէմ մաքառել կը պահանջէ. զօրաւոր է արտաքին թշնամին, զօրաւոր են նաեւ նախապաշարունակները. մեր ներքին թշնամին: Հաւատացեալ գիւղացիին ձեռքը զէնք տալու եւ զայն թշնամին սպաննել մղելու համար, պէտք է կռուիլ զարբրով արմատացած նախապաշարունակներու դէմ, որոնք մարդը կը կապկպեն ու անգործութեան կը դատապարտեն. ատիկա «Աստուծոյ զոյուութեան» դէմ կռուիլ չէ: Մտքերը պոտորել, գաղափարները խեղաթիւրել, հաւատքը խաղալիք ընել, ու այդ ամէնը շահագործել միամիտները խտրելու համար այն տեսակ գահավիժումներէն է, որոնց մէջ սապակողը գերեզմանաքարի մը միայն կը սպասէ ազատուելու համար:

—)(—

ԳՈՒԹԱՆ

Ստացանք Գուժանի երկրորդ թիւը Գուժանի Պ. խմբագիրը աւական թուով համակրական նամակներ ստացեր է կովկասէն և ուրիշ տեղերէ իր այդ օգտակար ձեռնարկութեանը համար: Միայն համակրանքը բաւական չէ, հարկաւոր է ջանալ այդ ամսագիրը գոնէ մեր գիւղացիներու գրագէտ մասի մէջ տարածել: մինչև օրս մեր գիւղացիներու ձեռքը իր արհեստին վերաբերեալ գիրք մը կամ գրութիւն մը եղած չէ, գիւղական ուսուցիչները և քահանաները պէտք է աշխատին գիւղացիները Գուժանի հետ ծանօթացնել: Գուժանը իր նպատակին ծառայած պիտի ըլլայ այն ժամանակ, երբ շատ տարածուի գիւղական հասարակութեան մէջ: Չենք կարծեր որ կովկասի և Տաճկահայաստանի գիւղացիները Գուժանի պէս ամսագրի մը գոյութիւնը սպասուելու չափ բաժանորդներ տան, մանաւանդ սկիզբները: հարուստ հայերը պարտաւոր են մի քանի օրինակներ թափանցող գրուիլ և տարածել, մինչև որ գիւղացիներ սորվի հասկնալ այդ ամսագրի արժէքը:

ԱՁԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

1895ին Սամաթիոյ մէջ չքաւոր ընտանիքներու ալրած տունները վերաշինելու համար հանգանակուած 1000 ոսկիի գումարովը հետզհետէ 25 բնակարան շինել որոշուեր է:

Կրօնական ժողովը ինկատի ունենալով Ռուսիոյ հայերու հոգեւորապէս լքեալ վիճակը. որոշեր է յանձնարարել Երուսաղէմա պատրիարքական փոխանորդ Երէցեան Գէորգ եպիսկոպոսի ոչ քանի մը ամիս այցելէ Ռուսիան, հայոց վիճակը քնննէ, տեղեկագրէ, և ապա հովուական վարչութիւն մը հաստատուի:

Նպաստից յանձնաժողովը որոշեր է մէկ ոսկի ամսաբան տալ Ալաշկերտի Խաստուր գիւղի վարժարանին:

Աստրախանի (Ռուսիա) առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սէթրակեան պատրիարքարանի գրեր է թէ տեղւոյն ժողովուրդը կուզէ որբանոց մը բանալ ի յիշատակ հանգուցեալ Ջանչեանցի: Նպաստից յանձնաժողովը այս գիրը տեսնելով որոշեր է պատասխանել թէ Ջանչեանցի հաստատած որբանոցներուն մի քանիին չորս տարիէ ի վեր վճարուած չէ, ուստի

Աստրախանի ազգայինները կըրնան իրենց հովանաւորութեան տակ առնուլ յիշեալ որբանոցներուն երկուքը:

Նպաստից յանձնաժողովը քանի մը գաւառներէ կարօտեալներու համար եկած նպաստի խնդիրներուն՝ որոշեր է պատասխանել թէ սնտուկը նպաստելու վիճակի մէջ չէ և թէ պէտք է տեղական միջոցներով օժանդակել կարօտեալներուն:

Քաղաքական ժողովը Պ. Խըւրբեան Գրիգորի յանձներ է բարեկարգել պատրիարքարանի ելեւմտական գործերը, քննել հաշիւները և կարեւոր տնօրինութիւններ ընել, միայն մէկ տարի պայմանով: Նոյն նիստի մէջ Պատրիարքարանի ամսական ծախք որոշուեր է 500—550 ոսկի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ի Ք Ի Ա

Երկար ու բարակ բանակցութիւններէ վերջ Ֆրանսո-թրքական վաճառականական դաշինքը կնքուեր է, Ֆրանսայի համար նպաստաւոր կերպով:

Այս դաշնագրի համաձայն մաքսատան պաշտօնեաները իրաւունք ունին որոշ պայմաններով այցելել ֆրանսական նաւերը:

Բնագիրը պիտի զրկուի Ֆրանսական կառավարութեան հաստատութեանը համար, ուրկէ ետքը դաշնագիրը վերջնապէս պիտի ստորագրուի:

Սպանիոյ թուրք դեսպանը իր կառավարութեան յայտարարած է որ նիւթ իր գրամական պահանջներուն զոհացում չը տրուի, ինք իր հրաժարականը պիտի զրկէ Սպանիոյ կառավարութեան:

Ռուս դեսպանը կրկին Սուլթանի կողմէ կը սեղմէ իր գրամական պահանջներով, նախ կուզէ պատերազմի սուղանքին անցեալ տարուան վճարելիքին մնացորդը 50,000 ոսկի և Ռուս. Խըրքական պատերազմի միջոցին ռուսահպատակներու կրօն ֆլուսներուն փոխարէնը՝ 43,000 ոսկի:

Կարելի է որ ռուսը այս պահանջները զանձեւէն յետոյ, պատերազմի մէջ սատկած ձիերուն արժէքն ալ պահանջէ:

Մէքսէէն մինչև Գամասկոս շինուելիք երկաթուղիին գլխաւոր ինժինէօրը Երլաըէն հրաման ստացեր է ամեն միջոց ձեռք առնել արդէն սկսուած աշխատութիւնները արագաբար աւառալ տանելու համար:

Պոլսոյ մէջ մասնաւոր աղբիւրներէ անդեկուլութիւն ստացուեր է թէ Սելանիկի մէջ ձերբակալուած 19 պուլկարներու զատը, որոնք իրր յեղափոխա-

կաններ կը մեղադրուին, տեսնուեր է. ասոնցմէ երեք հոգի մահուան դատապարտուեր են, երեքը հինգ տարուան բանտարկութեան, մէկը երկու տարուան իսկ մնացածները արգար ճանչցուեր են:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն «Թայմզ» կը հաղորդեն թէ ձարի նախագահութեամբ՝ նախարարական ժողովը, որոշած է փոխել այն օրէնքը որով խռովարար ուսանողները պիտի զրկուէին զօրաբանակները. նոյն ժողովի մէջ որոշուած է բարենորոգումներ մտցնել նաեւ համալսարանական կանոններու մէջ:

Նոյն թերթին Բէքինէն կը հաղորդեն որ Ռուսական արտաքին գործոց նախարարը և Անգլիական կառավարութիւնը համաձայնեալ են կոմս Վալտերիչի միջնորդութիւնը ընդունել ի ինչն ձիերի միջադէպի առթիւ:

Բեթերսպուրկի քաղաքապետը արգելած է փողոցներու մէջ և հրապարակներու վրայ հաւաքուիլ, ով որ այս հրամանին չի հնազանդի կամ երեք ամիս բանտ պիտի պառկի, կամ թէ 500 րուպլի տուգանք պիտի տայ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

Բանակցութիւնները դադրելէն յետոյ անգլիացիները մեծ ուժ կը պատրաստեն վերջնական հարուածը տալու պօէրներուն:

Ռուսներու մէկու մը հարցումին, պատերազմը վերջանալու մասին, պատասխանած է թէ որոշ կարծիք մը չունի, բայց համոզուած է որ Լօրտ Բիշնիլի ճարպիկ ձեռքերով խաղաղութիւնը պիտի վերահաստատուի:

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

«Թայմզ» կը հաղորդէ որ ստոյգ ազբիւրներէ կը հաստատուի թէ մեծ պետութիւնները բողոքեր են Ռուսիոյ և Չինաստանի միջև Մանչուրիոյ մասին մասնաւոր դաշնագրութիւն մը կնքուելուն դէմ, քանի որ Չինաստանի մէջ հաշտութեան բանակցութիւնները տեղի ունին. Ռուս արտաքին գործոց նախարարը կը կերպով պատասխանած է Անգլիոյ՝ Մանչուրիոյ մասին եղած դաշնագրութեան պատճէնը պահանջելու համար:

Ռուսիա որ Չինաստանի մէջ 100000 զօրք ունի, որոշեր է այդ թիւը կրկնապատկել:

Չինաստանի խռովութիւններու միջոցին պօքսէրները և շինացիները 240 եւրոպացի և 30000 բնիկ քրիստոնեաներ սպաննեալ են:

Ռուսիոյ Մանչուրիոյ գրասեւրուն դէմ կը կնեան և ձարունները, անոնք ալ պատրաստութիւններ կը տեսնան իրենց բաժինը ստանալու:

Ս Ե Ր Պ Ի Ա

Պելկրատի մէջ լուր կը պտըտի թէ Ալէքսանտր թագաւորը կրկին անգամ խորհրդակցած է քաղաքական կուսակցութիւններու պետերուն հետ սահմանագրութիւն փոփոխութեան ենթարկելու համար:

Ալէքսանտր նպատակ ունի ձեռնարկուի մը կազմելու, որուն անդամներու մէջ մասը թագաւորի կողմէն պիտի նշանակուի, իսկ միւսը նահանգները պիտի ընտրեն:

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԳ

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի Պատուարժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպանուի համար, ի նպաստ այդ բազմակարգ հաստատութեան հրապարակ հանուաւ և մասնաւոր խնամքով պատրաստուած առաջին տեսակ սիկարի թղթի հոս զրկած ըլլալով, կը ինքրուի յարգոյ հասարակութեան նախապատուութիւնն տայ այս թղթին, թէ անոր ընծայած առաւելութիւններուն համար եւ թէ նպատած ըլլալու համար հարիւրաւ խղճներու հոգատարութեան դժուարին եւ բազմապահանջ գործին:

Դիմել Տիար Պիպէրեանի վաճառատներ, միակ կեդրոնատեղի Պուլկարիոյ համար, Տիպէք-Չէյմէ:

Գին 2.70 Ֆր. Ա. Ն. Բ. 9-10

ՏՕԲԹ. ՍԻՄՈՆ ԳՈՒԹՈՒՄՃԵԱՆ Ի ՖԻԼԻՊԷ

Մանկարար՝ կնախարարոյ մասնագէտ միզային հիւանդութեան որ բաւական ժամանակէ ի վեր բարի կը գտնուէր վերոյիշեալ հիւանդութիւններու նորանոր դարմանելու ուսումնասիրելու համար, վերադարձած ու ֆիլիպէ հաստատուած է պողոտային վրայ նամակատան ճիւղէմի փողոցին մէջ, Հիւանդ կրթութեան ամեն օր ժամը 2—6 հինգ շաբթի օրերը միւլենոյն ժամերու միայն կինիք ձրիարար կը դարձան ունի: 2-5

Отговорникъ: Д.рѣ МѢГХРДИЧЪ ВАРТАН

Печ. «Взаимность» — Варна.